



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 41

14 ապրիլի 2012 թվական

ՈՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐԱՀԱՎԱՔԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով լայն հեղափոխական դաշնակցություն՝ կուսակցության լիազոր ներկայացուցիչ Ն. Բսպիրյանի պաշտոնական գրությունը 2012 թվականի ապրիլի 16-ին, ժամը 16⁰⁰-ին Մարալիկ համայնքի կենտրոնական հրապարակում Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության շրջանակներում լայն հեղափոխական դաշնակցություն՝ կուսակցության կողմից հանրահավաք կազմակերպելու ցանկությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 29-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության լիարտոնական օրենսգրքի՝ 18-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության ձևավաքների ազատության մասին՝ օրենքի 6, 7, 11, 21-րդ հոդվածների

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. լայն հեղափոխական դաշնակցություն՝ կուսակցության լիազոր ներկայացուցիչ Ն. Բսպիրյանի իրազեկումն ընդունելի գիտություն լայն հեղափոխական դաշնակցություն՝ կուսակցության կողմից 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության շրջանակներում, 2012 թվականի ապրիլի 16-ին ժամը 16⁰⁰-ին Մարալիկ կենտրոնական հրապարակում հանրահավաք անցկացնելու մասին:
2. Իրազեկումն ի գիտություն ընդունելու մասին որոշումն անհապաղ տեղեկացնել կազմակերպիչներին և ոստիկանությանը, ինչպես նաև այդ որոշումը փակցնել քաղաքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:
3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքապետարանի վարչական շենքում այն փակցնելու պահից:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ